



Ընակ :

ԸՆԱԿԸ բանաստեղծութեան մէկ տեսակն է որ մարդուս միշտ սիրելի եղած է . վասն զի քիչ խօսքով շատ բան կը հասկըցընէ , առանց նեղացընելու կը խորատէ , առանց սիրտ կոտորելու կը յանդիմանէ , ու առանց ձանձրացընելու կամ յոգնեցընելու կը զուարճացընէ : Մեր Մխիթար Վօշին առակները , նմանապէս Ուիմպիանու և Վարդանայ անունովը գտնուածները ընդհանրապէս շատ բնական ու ազուոր են . ուրիշ արևելցոց մէջ անունի են Վոգման հէքիմին առակները . իսկ յունաց Լատովպոսը ամէնէն վեր կը սեպուի իր առակներուն շատ խելքով ու գեղեցիկ պարզութեամբ գրուած ըլլալուն համար . այնչափ որ ուրիշ եւրոպացի առակագիրներուն

գրեթէ ամէնքն ալ անոր հետեւեցան : Լատինացւոց Փեդրոսը Լատովպոսին առակները շատ սիրուն ոտանաւորընելով կոկեց . նոյն առակները գաղղիացւոց Վաֆոնթէնը այնպէս զարդարեց իր զուարճալի՝ բնական՝ կենդանի ու խելացի ոճովն որ նախանձելի եղաւ ամէնուն , և դեռ մէկը չէ եղած որ ընդհանրապէս անոր վարպետութեանը հասնի : Իտալացւոց անուանի առակագիրներն են Տէրտսի , Պեռթոլա , Փինեթթի , և այլն . գերմանացւոց մէջ Վեսինկ , Կելլերթ և ուրիշներ . ռուսաց մէջ Տմիթրիեվ , Վալիով և այլն : Հոս առ այժմ ասոնց մէկքանիէն մէյմէկ առակ թարգմանած դնենք օրինակի համար :

Հոռն և սրտեր իւր :

Աւելազանց տենչ զայր ագահ
Առնէ 'ի խարբս գիւրասահ : —
Յինչս օտարին որկորուստ
Ձիւրըն մասնէ 'ի կորուստ :

Ընդ գետ 'ի լող անկեալ շուն,
Միս 'ի բերան յիւր 'ի չուն,
Յառեալ ետես զըստուեր իւր
Ի հայելոջ անդ 'ի ջուր :
Եւ համարեալ այլ իմն որս
Յորկոր այլոյ ջուրցն 'ի խորս,
Գրաւել և զայն ցանկացաւ :
Այլ ցանկուծիւնն ինքնադաւ
Լիք զոր ունէրն 'ի բերան,
Եւ ոչ միւսումըն ժաման :

ՓԵՒՐՈՍ

Քաղաքոյի մոռն և քաղաքոյի :

Քաղաքացի մոռն աղնիւ
Ընդելական հեշտ բանիւ
Ձգեղջուկն 'ի առն հրաւիրեաց
Ի ճաշկերոյթ փրջրանաց :
Ի կապերտի պարսկական
Ճաշք համագամք սրփուեալ կան :
Ո՛հ քաղցրուծեանն յոր անդէն
Սերտ բարեկամք վայելէն :

Էր անթերի այն ըսպաս,
Եւ չէր խորտիկ ինչ պակաս :
Այլ վաղ էարկ անդ ժըխոր
Ոմն արտաքուստ եկաւոր :

Քանզի առ գուրս տաճարին
Յարեաւ շըռնոզն ահագին :
Խոյս ետ 'ի ծակ կոշնատերն,
Եւ հիւրն ըզհետ միտանէր :

Լըռեաց շըշուկ, ոչ ոք է :
Մըկունքն ելին 'ի ծակէ :
Ատէ կոչողն հիւրասէր :

« Եկ բազմեսցուք 'ի ճաշ մեր » :

« Հատ է, առէ գաշտեցին :
Եկ դու վաղիւ 'ի տուն իմ :
Թէ և իմ սէր աղքատին
Ձի՛նչ առ կոշնովքըդ քոյին :
Այլ իմ անդորր է սեղան,
Յոր վայելեմ անխափան :
Այն ըզբօսանք քաւ յինէն
Ձոր ահ ' Է երկիւղ շըփոթեն » :

ԼԱՓՈՆԹԵՆ

Գառն և Դժնիկ :

Հանթք և ամպրոպք որոտընդոստ,
Հողմ ըզմայրիս տատանէր,
Օգ մըրրրկեալ 'ի խիստ շառաչ
Կուագս ահեղ յօրինէր :

Ահաբեկեալ 'ի թաւ մայրիս
Գառն 'ի հօտէն իւր մոլար,
Յայս կոյս և յայն փուծայր ճեպէր
Անքոյթ խընդրեալ իւր դադար :

Դըժնիկն անդէն ձայնեալ առ նա,
« Եկ մոռտ, առէ, յիմն 'ի ծոց :
Ես պահեցից ըզքեզ յամրի
Ի սպառնալեաց խեռ ամպոց » :

Եմոռտ անմեղ գառն ընդ նովաւ,
Եւ ժանտ փրջոցն 'ի բերան
Գրգեալ կրոուեալ պատատեցաւ
Այն ասրանիւթ պատմուճան :

Անց դադարեաց թափ մըրրրկին,
Գառն ելանել կամեցաւ :
Այլ 'ի ժանիս փրջոցն անգուծ
Այնպէս անգերծ արգելաւ :

Ձի և սպրեւ այլ չէր հընար
Յանագորոյն 'ի մագլաց,
Թէ ոչ ըզգեղմն 'ի նա թողջր,
Գուցէ և զմորթն 'ի թիկանց :

Բայց քըճքըճեալ ել 'ի վերջէ
Եւ կողավէր եղկեղն :
Եւ քան հողմոց ' նրզովս կարգայր
Դըժնեայ բարուց վանատրին :

Հէգ գատախազք քան 'ի դատից'
Ի պաշտպանաց խիթասցին :

ՓԻՆԵՕԹԹԻ

Էշ և Սիւսի :

Էշ սոխակի պատահեալ,
« Ըջքէն, առէ, այլ ընդ այլ
Ձըրոյց անբաւ
Յարգ ընթացաւ,
Թէ ես երգիչ քաջոլոր :
Այլ գիւրհաւան ես ոչ եմ
Մինչև ունկամբս իմ լըսեմ :
Դու ինձ հապա
Երգ ինչ սաս,
Տեսցուք իցէ գաշնաւոր » :

Յայնժամ սոխակ հրաշապէս
Յիւր մըխեցաւ 'ի հանդէս :
Ուսնոյր փափուկ գեղգեղէր,
Բիւր դայալիկս յօրինէր :
Պարգեալ ըզձայնն և գեղջր,
Հընչէր հովիտ և բըլուր :
Այն այգածնին
Այն երգեցկին
Բնուծիւնք համայն կան 'ի լուր :

Հողմք լըռեցին, հաւուց պարք,
Մակաղեցան և ոչխարք :
Ի հաւն հարեալ զաչս հովիւ,
Նորին գերեալ էր ձայնիւ :
Լըռեաց թրուտն :
Լըռէր բնուծիւն :
Էշն ես պատգամ սուղ բանիւ :

« Ձըրոյցքն, այո, են արգար,
Եւ չէ տաղտուկ քոյդ բարբառ :
Այլ լինէիր դու քաջուս
Ի նուագ երգոց բազմահիւս,
Թէ վարժէիր
Առ ոստ ընտիր
Աքաղաղի մեր տեղւոյս » :

Լըռեալ զվըճիւ զայս անկարծ
Թըռեաւ սոխակ քաջ 'ի բաց :
Մի տար և զմեզ, ո՛վ Աստուած,
Ի ձեռս անմիտ գատողաց :

Մի տար և զմեզ, ո՛վ Աստուած,
Ի ձեռս անմիտ գատողաց :

ՔՈՒԼՈՎ